100
L II·2

Բ. ՇՐՋԱՆ — ԹԻՒ 1 ՄԷԿ ԴԱՇԵԿԱՆ ՈՂՋ ՇԻՆԳՇԱԲԹԻ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
Տնօրէն-Խմբագիր՝ Յ. ՀԱՂԹԻԱՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴԱՀԻՐԷ, Ապահն փողոց
ՄՈՒԳԱԹԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ
Մէկ անգամի համար տողը 3 Ղրշ. ոգէ։
Մէկ անգամէ աւելի ծանուցումներու համար մասնաւոր պայմաններ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . Ղրշ. ոգէ 100
Վեցամսեայ . . . » 55
Եռամսեայ . . . » 30
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . Ֆր. 26
Վեցամսեայ . . . . » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ
Ո ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Եգիպտական հրապարակին վրայ նորեկ մը չենք, ուստի աւելորդ կը համարինք երկար բարակ գծել այն ուղղութիւնը որուն պիտի հետեւի «Փարոս»։

Դաղարի այս երկք տարիներուն մէջ մեր խմբագրի դաւանանքը փոխելու պատճառ մը չենք ունեցած, ուստի համեստաբար կրնանք ըսել թէ մեր թերթը կը մնայ այնպէս՝ ինչպէս որ էր իր առաջին շրջանին, առանց մեծ յաւակնոտութիւններու պզտիկ լրագիր մը՝ որ սահմանուած է ապրիլ ժողովրդէն և ժողովրդին համար։

Մենական կիրքերու յագեցում մը փնտռելու, ապէ կամ անկէ վրէժ յուծելու, հին հաշիւ մը կարգադրելու նպատակաւ չէ որ հրապարակ կ'իջնենք. ընդհակառակը, մեր նպատակը եղած է և պիտի ըլլայ, Եգիպտոսի Հայերուն տալ լուրջ, շահեկան, հաճելի լրագիր մը որուն նշանաբանը ըլլայ անկողմնակալութիւն, անկեղծութիւն եւ օգտակարութիւն. նշանաբան մը, զոր հպարտութեամբ կըրնանք յուցնել մեր նախորդ շրջանի հաւաքածոն կազմող 101 թիւ «Փարոս»ներու ամեն մէկ տողին մէջ։

Մեր կարողութեան չափով և պարտաճանաչութեան ու պատշաճութեան թոյլատրած սահմանին մէջ մատնիչ ընել ազգասիրութեան պատրուակին տակ գործուած և նորաձեւութեան կարգ անցած ամեն քօղարկեալ ոճիրները, բողոքել ազգին կենսական շահերուն դէմ սարքուած անհատական կամ հաւաքական արարքները, պարսաւել ինչ որ տգեղ է, սուտ և կամ անիրաւ, ձաղկել մեր բարքերու աղտոտ կողմերը, քաջալերել ինչ որ ազնիւ է, օգտակար և բարի, ահա՝ այս է մեր սկզբունքը որմէ չի շեղիլ մեր պարտականութիւններուն ամենէն քաղցրը և սիրելին պիտի ըլլայ։

Հանրութեան օգտակար ըլլալու մեր տենչը, արհամարհոտ աչքով մը նայիլ կուտայ մեզի այն փշալից ճամբուն որմէ ստիպուած ենք անցնիլ, սակայն հոգ չէ, «Փարոս»ի անցեալ շրջանին համար ամեն կողմէ մեզի հասած համակրանքի արտայայտութիւնները և քաջալերութիւնները, մոռցնել տուին մեզի անցեալ դժուարութիւնները և պատճառ կ'ըլլան նոյնպէս՝ որ առանց վախի ըսպասենք ապագային որուն անուշ և կամ լեզի անակնկալները մեր հաւատքը խախտելու բնոյթը չեն կրնար ունենալ։

Ժողվել մեր շուրջը եգիպտաբնակ գրագէտներու փոքրաթիւ բայց ընտրեալ խմբակը, վստահ ըլլալ արտասահման գտնուող մեր գրագէտ բարեկամներու աշխատակցութեան վրայ, ահա՝ առաջին հոգը որ ունեցանք «Փարոս»ի այս վերերևման առթիւ և ուրախ ենք կարենալ ծանուցանելու մեր սիրելի ընթերցողներուն թէ հետզհետէ և ի կարգին՝ այս էջերուն մէջ պիտի երևին անոնց լաւագոյն արտադրութիւնները, ամեն մէկը իր մասնաւոր ճիւղին մէջ։

«Փարոս»ը շաբաթը երեք անգամ հրատարակելով կարծենք մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլանք ամեն անոնց որոնք եթէ ոչ օրը օրին, բայց գոնէ քառասունը ութը ժամը անգամ մը ծանօթութիւններ ունենալ կը սիրեն՝ քաղաքական աշխարհին մէջ անցած դարձածին վրայ։

Հեռագրական լուրերու ընդարձակ բաժին մը տալով, փառաւոր թերթոնի մը հրատարակութեան սկսելով և օր ընդ մէջ՝ սեղանաւորական ծանօթութիւններու մասնաւոր սիւնակ մը յատկացնելով՝ նորութիւն մը և միևնոյն ատեն օգտակարութիւն մը աւելցուցած պիտի ըլլանք նախկին «Փարոս»ի պարունակած նիւթերու պէսպիսութեան վրայ, որով բարեշրջում մը յառաջ բերած պիտի ըլլանք եգիպտահայ օրագրութեան մէջ։

Մասնաւոր կերպով աշխատեցանք և տակաւին պիտի աշխատինք մեր ծանուցումներու բաժինը արդիւնաբեր վիճակի մը հասցնելու համար։ Ուրախ ենք որ մեր այս ճիգերն ալ յաջողութեամբ պսակուեցան շնորհիւ այն անձնուէր ձեռնտուութեան որ մեզ չի խնայեցին մեր դիրքի տէր և թերթիս յարատևութեան ցանկացող քանի մը ազնիւ բարեկամներ։

Սիրելի է մեզ յուսալ թէ այս անգամ՝ բաւականաչափ բաժանորդներ պիտի ունենանք թէ՛ հոս և թէ՛ արտասահմանի մէջ, որոնք թերթիս գոյութիւնը ապահովելէ զատ, ապագային լաւագոյն բան մը ընելու միջոցները պիտի ընծայեն մեզի և այսպէսով պիտի երաշխաւորեն «Փարոս»ի յաջատև շարունակութիւնը։

Այս անգամ թերթիս տնօրէնը միայն և միմիայն «Փարոս»ի խմբագրական մասին նուիրած ըլլալով ինքզինքը, անոր ամբողջ նիւթական վարչութիւնը և մատակարարութիւնը յանձնուած է կարող և յարգուած անձնաւորութեան մը։

Այս ծրագրով ահա մեր առաջին թիւը լոյս կը տեսնէ այսօր և այս առթիւ զոհողութիւններու փոխարէն ներուի մեզ յուսալ որ մեր բարեկամները և համակրողները ի մասնաւորի ինչպէս Եգիպտոսի ընթերցասէր հասարակութիւնը ընդհանրապէս, իր քաջալերութիւնը չպիտի զլանայ մեր այս ձեռնարկը յաջողցնելու համար, եթէ անոնք ալ մեզի պէս փափաքող են ունենալ թերթ մը՝ առաջադրեալ նպատակին ծառայող։

Մեր ընթերցողները մենք միայն բան մը պահանջելու իրաւունքը ունին —Ընել... ինչ որ կ'ընեն ուրիշները...։

Օ՜հ, այդ մասին վախ չկա՛յ...։

ՌԷԹԷՈՍ Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

«Դէմք մին է» բացատրութիւնը կը մտածեմ որ Պէրպէրեանի խմբը, կամ աւելի ճի՛շդ մուիը ունեցող մարդոց համար ստեղծուած է։ Նէրկայ ժամանակներուս մէջ, ուր ամեն սկեպտիկութիւն մը մաքին ցեց՝ եւ վարքոց հաճոյամոլութիւն մը մարմնոյն որդ՝ առատօրէն կ'արտադրեն անպոյն, անձեւ, անանուն էութիւններ, անպտղաբեր և աղաւաղեալ զիմագծութեամբ, թոշոմ շարժումներով, կապկավայել ինքնուրացութեամբ յարափոփոխ էակներ որոնց յաւէտ զլացուած է ինքզինքնուն տէր և գիտակից ըլլալու փառքը, տեղ տեղ երբ կամքի և արութեան տակուն ու անթեք ոգնաշարով մը խրոխտալով զէմերնիս կը կանգնին մարդեր որոնք աշխատած են ու կռուած, բան մը ուզած են ու կատարած, բան մը երազած ու մարմին և շունչ տուած են անոր, հիացմամբ ու յուզումով կը խոնարհինք անոնց առջև և կ'անցնինք ըսելով «Դէմք մին է»...։ Պէրպէրեան ասոնցմէ է։

Մարդեր կան որոնց բարոյական էութիւնը ֆիզիքական առողջ գործարանի մը հիւսուածաբանական անթերի տարբաւորումը ունի և կեանքի կանոնաւոր խաղը, արեան կատարեալ շրջանը, կամ մեքենայի մը ներսագիտ կազմուածքն ու շարժականութիւնը, և կամ վարպետի մը ճաշակէն եղած գեղարուեստական երկի մը կատարելութիւնը, մասերուն ներդաշնակ ու հոծ պատուորումը միրական միութեան մը նախադասութեանը տակ։ Մարդեր որոնց համար կարելի է ըսել թէ կուգիակերպութիւն մին են ամբողջ։ Պէրպէրեան ասոնցմէ է։

Հազուագիւտ են այն մարդերը որոնց կեանքը անհատի մը անհատ պատմութիւնը ըլլալէ աւելի կենդանի ուսուցում մին է, խոսուն օրինակ մը, այլոց քարոզելի ապրելակերպ մը, որոնց տրուած է կարողութիւնը, մեծութիւնը, փառքը՝ մարմնացում մը տալու մարդկային հոգիին սիրական երազներէն մէկուն, և այսու՝ իրենց մասնաւոր կեանքը, ամբոխին հիացումին վերևէն, բարձրացնելու մինչև տիեզերական ու մարդկային արժէքը խորհրդանշանի մը, վերացումի մը, դիցավէպի մը (mythe)։ Պէրպէրեան ասոնցմէ է։

«Մարդկային հոգիին սիրական երազներէն մէկուն» ըսի։

Ես ու կամք կորսնցուցած, կա՛մ ողբալին գետին հակող կամ միստիկական վերացմամբ երկինք յառած՝ հակասական ու շփոթ իղձերու ետեւէ ցիրուցան՝ արդի հոգւոյն սիրելազոյն երազը սա չէ. կամք, գործելու ուժ, միութիւն։

Միութի՛ւն։ Քիչ տեսարան կայ այնքան շքեղ որքան սա։ Մէկը որուն բովանդակ կեանքը մէկ զաղափարի մը կ'սպասարկէ ալլամերժօրէն, որուն բոլոր խոհերը, խօսքերն ու շարժումները դէպի մէկ նպատակ կը ձգին, մէկ ամբողջ մը կը ձեւացնեն, մէկ բանի մը փառքը կ'երգեն միահամուռ։ Ահա՛ Պէրպէրեանը։ Միութի՛ւն. ահա գաղտնիքն ու կնիքը իր միութեան. ահա՛ խրոխտանը իր կեանքին։ Գործնական բարոյականի —աշխատութեան— այդ սքանչելի մատեանին ճակատը տիտղոս մը միայն կը վայլէ. Միութիւն։

Այն մարդը որ զեռ երիտասարդ՝ կրցաւ յղանալ Պէրպէրեան Վարխարանին գաղափարը, ու միս մինակ, իր կամքին ու խելքին վրայ զրած իր յոյսը, միմիայն ինքզինքին կրթնած, ձեռնարկեց այդ գործին,

յառաջ տարաւ զայն աննկուն կորովով, անդուլ աշխատութեամբ, դժուարութեան ու անկարելիութեան բոլոր քարընդոտներէն, փոսերէն, լեռներէն անվթար անցուց զայն, որ 25 տարի շարունակ դարբնեց, կոհց այն հսկայ գործը որ Պէրպէրեան Վարժարան կ'ըսուի, որ ոչնչէն —ոչնչէ՛ն, իր Եսէն, այսինքն իր մտքէն ու կամքէն— ստեղծեց այդ ոլորտը, այդ մթնոլորտը ուր բովանդակ մտաւորականութիւն մը, բովանդակ բարոյականութիւն մը ծնունդ ու սնունդ առին։ այդ մարդը, կ'ըսեմ, իրաւունք ունի հսկայի, ստեղծագործի հպարտութիւններ ու երանութիւններ զգալու իր արգաւանդ հոգւոյն խորն՝ կատարած գործին հանդէպ. Այդ սարդը արժանի է մեր ամենուս յարգանքին ու հիացման, և, իսկ՛ւ թէ՝ մաղթանքս իրականանար. արժանի է ան տեսնելու յիսնամեակը իր ազգանուէր հաստատութեան։

Իր նախկին սանը

ՄԻՔԱՅԷԼ Ս. ԿԻՒՐՃԵԱՆ

Աղեքսանդրիա 17 Հոկտ. 1901.

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ (*)

ՆՄԱՆՈՂԱԲԱՐ

ՈՂԲԱՅԵԱԼ ՄՕՐՍ
ՍԻՐԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Երիտասարդ մ'ասենով,
Բոլոր սրտով կը սիրէր
Աղջիկ մը. Եւ ըսէ՛ք ո՞վ
Երբէք այդ բան չէ ըրեր։

Բայց սիրուհին օր մ'իրեն
Ըսաւ, «կուզե՞ս քեզ սիրեմ»
—Ականջն ի վար մեղմօրէն—
«Ըսածս ըրէ՛, քեզ տեսնեմ,

«Գնա՛ բեր ինձ, կը լսե՞ս,
«Մօրդ սիրտը և շուտով,
«Շուներուս տամ, և այսպէս,
«Ջքեզ սիրեմ իմ հոգւով»

Վազեց գնաց, յիմարը,
Ոհ ի՞նչ սև օր, ի՞նչ փորձանք,
Ջարկաւ սպաննեց իր մայրը՝
Որ տուած էր իրեն կեանք։

(*) Անշուշտ պիտի ներսի Թերթիս անօրէնին, հայ գրականութեան մէջ իր début-ին ծառայող այս ոտանաւորը երկրորդ անգամ ըլլալով արտատպել «Փարոսի Բ. շրջանի այս անդրանիկ թուին մէջ, և որդիական պարտականութենէ մը մղուած՝ ձօնել զայն իր ողբացեալ և սիրելի մայր յիշատակին որուն մահուան Երկրորդ տարեդարձն է այսօր, 19 Սեպտեմբեր։

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ»Ի (1)

ԺԷՀԱՆ Տ'ԻՎՐԻԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՉՈՒԱԾ ՎԷՊ

ԳԼՈՒԽ Ա.

Ժամը 11 ին ճեպընթացը կայարանը կը մտնէր այնպիսի որոտագոչ զրրփիւնով մը, որ կարծես թէ վինկէ բարձր հրրիքը ցնցուեցաւ. անմիջապէս, Մորկան ապա ներքինին՝ իշխողական շարժումով մը ամբոխը ճեղքեց, և բոլոր գլխները մանրակրկիտ կերպով աչքէ անցուցեալ վերջը, Ժէրմէնին քովը եկաւ, առժամայն ճանչցաւ զայն միւս ներկայ կիներուն մէջ, զոնակը բացաւ և խոնարհութիւն մը ընելով.

Խլել սիրտը այդ կուրծքէն
Եւ դուրս ելլելը մէկ ըրաւ,
Շուտ հասնելու տեղչանքէն,
Փողոցին մէջ վար ինկաւ։

Սիրտը ծեռքէն սահեցաւ,
Գլորեցաւ ի գետին
. . . . . .
—Տղաս, ո՞ւր տեղդ ցաւեցաւ,—
Հարցուց սիրտը լալագին։

1890. Յ. ԱԼՓԻԱՐ.

ՄԵՐ ԹԵՐԹՕՆԸ

Փարոսի ընթերցողներուն գրական ճշմարիտ հաճոյք մը պատճառելու նպատակաւ, մեր առաջին թիւէն իսկ կսկսինք իբրև թերթօն հրատարակել՝ թարգմանութիւնը ֆրանսերէն վէպի մը

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

որ խիստ հետաքրքրական գործ մըն է Եգիպտացի հարէմներու կեանքէն քաղուած, վէպ մը՝ որ մեծ ընդունելութիւն գտած է թէ հոս և թէ Եւրոպայ։

Հեղինակուհին՝ Տիկին Ֆահմի պէյ որ ԺԷՀԱՆ Տ'ԻՎՐԻԷ ծածկանունով ծանօթ է գրական աշխարհին մէջ, հարէմի կեանքով ապրած ըլլալուն՝ մօտէն ուսումնասիրած է իր տիպարները, որով իր գործը ապրուած կեանքի նկարագրութիւն մը ըլլալու առաւելութիւնն ալ ունի։

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ախորժանօք կարդացուելիք գիրք մըն է, մանաւանդ որ նկարագիր ոճով մը կը պատմէ Եգիպտական բարձր դասին պատկանող հարէմի մը խաբեութիւններուն ետին անցած դարձածը։

Բաղդաւոր ենք կարենալ աւելցնելու թէ այս գեղեցիկ վէպին թարգմանութիւնը կը պարտինք մեր արդի թարգմանիչներու ամենէն հեղինակաւորներէն Տիար Յ. ՍԵԹԵԱՆի ուրուն՝ «Արեւելք»ի մէջ վերջերս հրատարակած քանի մը կտորները հիացմամբ կարդացուեցան մեր փափկաճաշակ գրասէրներու շրջանակին մէջ։

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

Սեթեանի պէս թարգմանչի մը գրչին տակ բան մը չէ կորսնցուցած իր հրապոյրներէն, որոնք մէկէ աւելի են։

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

Գէր. Յովսէփ եպիսկոպոս Այվազեան որ Աղեքսանդրիա վերադարձաւ երկուշաբթի, հետեւեալ օրը՝ ընկերակցութեամբ Թաղ. խորհրդոյ քարտուղար Տ. Լ. Մկրտիչեանի, մխիթարական այցելութիւն մը տուած է Աղեքսանդրիոյ Ամերիկեան Հիւպատոսին, Միացեալ Նահանգներու Նախագահ Պ. Մաք Քինլիի մահուան առթիւ։

Նախարարական ժողովի վերջին նիստին մէջ տրուած որոշման մը համաձայն, Ազգ. Առաջնորդարանը գերծ պիտի մնայ արձանագրութեան տուրք վճարելէ Մուսքիի մէջ իր սեփականութիւնը գարձող տան համար։

Վերջին պահուն ստացանք Դահիրէի Որբախնամ և Աղքատախնամ ընկերութեանց խառն Յանձնաժողովոյ դիւանի կողմէն շահեկան պաշտօնագիր մը, բայց տեղի անձկութեան պատճառաւ, ստիպուած ենք մեր շաբաթ օրուան թիւին վերապահել անոր հրատարակութիւնը։

Աղեքսանդրիայէն մեզ կիմացնեն թէ՝ Թովմաս Ֆասուլեանեան՝ ծանօթ դերասանը, երէկ մեռեր է, տարժանելի հիւանդութենէ մը ետքը։

Մուշի և Սասունի նոր ջարդերուն վրայ հայասէր ոգւով գրուած նշանաւոր խմբագրական մը կը գտնենք «Թան»ի 14 Սեպտեմբեր թիւին մէջ, զոր Թերթս մամուլի տրուած պահուն միայն ստացած ըլլալով, ստիպուած ենք մեր յաջորդ թուով տալ անոր թարգմանութիւնը։

Աղեքսանդրիոյ մեր թղթակիցը մեզ կիմացնէ թէ՝ Պողոսեան վարժարանի Տնօրէն կարգուած է Տիար Համբարձում Պէրպէրեան, ծանօթ ուսուցիչը։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ.

Յակոբ Աշոտ եպիսկոպոս, նախկին առաջնորդական տեղապահ Եգիպտոսի, վերջապէս առաջնորդ ընտրուեր է Սամսոնի, տեղւոյն Դաւառական Ընդհ. Ժողովոյ միաձայն հաւանութեամբ։

Առաջնորդի մը համար լաւագոյն տեղ մը կարելի չէ գտնել, քանի որ այդ քաղաքն է որ ամենէն շատ.., ծուխ ունի, թէև քիչ մը աւերք գայ կենցաղասէր եկեղեցականի մը համար, ինչպէս որ է Յակոբ Աշոտ Եպիսկոպոս։

Պոլսոյ լրագիրներու մէջ կը կարդանք թէ Սուլթանը՝ Գ. կարգի Մէճիտիէ պատուանշանը տուած է Տ. Ռէթէոս Պէրպէրեանի, Հիմնադիր Տնօրէն Համանուն վարժարանին։

Նոյն պատուանշանը տրուած է նաև Արաբկիրի առաջնորդ Մուշեղ վարդապետի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

— «Տէյլի Թէլէկրաֆ»ի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ թէ անցեալ կիրակի օր քանի մը թուրք սպաներ Բերայի մէջ եւրոպացի մը հալածած են մինչև Հոլանտական դեսպանատան պարտէզը ուր վերջապէս յաջողած են ձեռք անցնել հոն ապաստանողը, հակառակ դեսպանատան պահապաններուն ընդդիմութեան։ Ընդունուած օրէնքներու պա բռնաբարումը մեծ յուզում յառաջ բերած է դեսպանական շրջանակներու մէջ և կ'ըսուի թէ Հոլանտական կառավարութիւնը գոհացում մը պահանջած է Բ. Դրնէն։

—Նորէն թղթատարական պայուսակներու խուզարկման խնդիրը մեծ աղմուկ կը հանէ դիւանագիտական աշխարհին մէջ։ Սեբաստիի և Սերպիական սահմանագլխոյն միջև երթևեկող պայուսակներն են որ ամենէն շատ կը բռնաբարուին և որոցմէ խել մը արժէքաւոր թղթեր ալ կը գողցուին թուրք պաշտօնեաներու կողմէ։

Աւստրիոյ դեսպանը աղմուկ բողոքագիր մը ներկայացուցած է Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութեան, ինչպէս նաև Պ. Պասթ, ֆրանսական դեսպանատան գործա-

— Օրիորդ Տիւպրէօյը դո՞ւք էք։

— Ես եմ, պատասխանեց դեռատի աղջիկը, և գարափը ցատկելով, թէպէտ զարմացած այդ սև զէմքին երևումէն, ներքինիին հետևեցաւ, եկաւ անոր հետ կայարանին տափաստանին վրայ, որուն առջև կը սպասէր Բրէնս Մուրատի կիսակառքը (ֆուրէ)։

Եւ որովհետև ներքինին, «Օրիորդ Տիւպրէօյը դո՞ւք էք» բսելէ վերջը, կարծես թէ ա՛լ անկէ անդին ֆրանսերէն ո՛րիշ բան չէր կրնար խօսիլ, դեռահասակ աղջիկը մնացած էր հոն վարանոտ, շուարած, այնչափ որ կառապանը իր բազմոցէն վար իջաւ և անոր առջև խոնարհութիւն ընելով, պուրկօնիական բամբ շեշտով մը ըսաւ.

— Օրիորդը վախնալու բան մը չ'ունի, օրիորդը կրնայ կառքը հեծնել. Բրէնս Մուրատի ծառայութեան մէջ եմ, նաև օրիորդին ծառայութիւն կրնամ մատուցանել,

քանի որ պատիւ ունիմ իր հայրենակիցն ըլլալու։

Աղջիկը սիրուն ժպիտով մը.

— Նոր հակալ եմ, ըսաւ, բարեկամս, և այդ քանի մը բառերը, այդ ոսկեհունչ ձայնը, այդ խռովայոյզ ժպիտը բաւական եղան առժամայն իրէն բարեկամ մը շահեցնելու այդտեղ։

Շերքինին կառապանի բազմոցին վրայ եկած էր, և Օրիորդ Տիւպրէօյլ, կիսակառքին խորը, առանձին, կը ջանար գաղափարները ժողվել, կը յիշէր եղածները՝ մըտածելով այս հեռաւոր ճամբորդութեան վրայ, որ առաջինն էր։

Քանի մը շաբթուան մէջ ո՛րչափ զէպքեր և ի՜նչ փոփոխութիւն նորահասակ աղջկան այդ գոյութեան մէջ։

Ֆրանսայէն կուգար Ժէրմէն, հարաւի մէկ քաղաքէն, ուր իր հայրը, Տօքթէօր Տիւպրէօյլ քսան տարի շարունակ պատուոր և նախանձելի դիրք մը գրաւած էր — ազնուասիրտ մարդ, հանճարեղ ու բարի, որ ինքն իսկ ստացած էր իր պաշտօնակիցներուն և յաճախորդներուն մէջ ունեցած շատ բարձր դիրքը։

Ժէրմէն, իր հինգ զաւակաց կրտսերագոյնը, բարօրութեան և գուրգուրանքի մթնոլորտի մը մէջ մեծցած էր, որոնք թերևս տուած էին անոր աչքերուն իրենց մեղմանոյշ պայծառութիւնը, ծաղկափթիթ մասրենիի. անոր գոյնին՝ այն ամբիծ թարմութիւնը, ու անոր շրթունքներուն՝ պայծառափայլ կենսաւորութեան այն փայլը որ կը յօրինէր անոր գեղեցկութիւնը. գեղեցկութիւն անոր համար պատուականագոյն, որովհետև ինքը միայն միտքէն չէր անցուներ զայն։

Մայրը սեղմաբար մեծցուցած էր զայն նրբանոյշ պարզմտութեամբ մը բարեխառնուած խստակրօն բարոյականի սկզբունքներուն մէջ։

կառարը, այս ապիւ գիմումներ բրած է Պ. Տէլքասէի և վճռական միջոցներ ձեռք առնելու հրամանը խնդրած է ֆրանսական կառավարութենէն։

Անցեալ շաբաթ 9 միլիոն ռուբլի պարունակող ծրար մը գողցուած է վերոյիշեալ պայուսակներէն։

—Բ. Դուռը դեռ կարգադրութիւն մը չէ բրած Պ. Պ. Թուպինիի և Լօրանտօյի պահանջներու մասին՝ հակառակ այնքան անգամ տուած խոստումներուն։

—Ֆէրիաուն պէյ, որ Փարիզի Ժէօն-Թիւրքերու վրայ հսկելու պաշտօն ունէր, Սուլթանին կողմէ, ամսոյս 11 ին ֆրանսական կառավարութեան ապգարարութեան վրայ Ֆրանսայէն դուրս ելլել սարսուած է։

—Պոլսէն առնուած տեղեկութիւններու նայելով, Եըլաբդի մէջ կատարեալ անկարգութիւն մը կը տիրէ ֆրանսական ծանօթ խնդրոյն մասին, որովհետև գիտեն թէ Պ. Լուպէյի կառավարութիւնը որեւէ բան մը չպիտի կրնայ ընել Զարին այցելութենէն առաջ։

Բ. Դրան և ֆրանսական պահանջատէրներու մէջ բանակցութիւնները կը շարունակուին, բայց բնաւ զոհացուցիչ ելքի մը յանգելու երևոյթը չունին։

ՏԵՂԱԿԱՆ

Ն. Բ. ԽՏԻՎԸ.— Մայիսի Սանիյէի կողմէ ստացուած հեռագրի մը համաձայն Ն. Բարձրութիւնը մասնաւոր ունկնդրութիւն մը ունեցեր է Սուլթանին հետ երկուշաբթի օր և իրիկունը ներկայ գտնուեր է Եըլտզի պալատան մէջ ի պատիւ իրեն տրուած թատերական ներկայացումի մը։

Բոլոր եւրոպական դեսպանները խաչվին այցելութեան գացած են կիրակի և երկուշաբթի։

Ն. Բարձրութիւնը հաւանականաբար ամսոյս 30 ին պիտի հասնի Աղեքսանդրիա ուր երեք շաբաթի չափ ևս պիտի մնայ՝ Նոյեմբեր 20ի մօտերը Գահիրէ վերադառնալու համար։

ՄՈՒՍԹԱՖԱ ՓԱՇԱ ՖԷՀՄԻ — Նախարարապետը որ այս պահուս Մարիէնպատ կը գտնուի, ամսոյս 21ին Աղեքսանդրիա պիտի ժամանէ Աւստրիական շոգենաւով։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20Ը.— Իտալական գաղթականութիւնը մեծ շքով պիտի տօնէ վաղը գիշեր Էղիպէթիէ պարտիզին մէջ Հռոմայ առման 31րդ. տարեդարձը։

Ցերեկեայ և գիշերային հանդէսներ պիտի տրուին յիշեալ պարտիզին մէջ ուր թատերական և սինէմատոկրաֆի ներկայացումներէ զատ հրախաղութիւններ պիտի կատարուին։

Մուտքը 10 ղրուշ պիտի ըլլայ և մուտքի տոմս ունեցողները իրաւունք պիտի ունենան մասնակցիլ վիճակահանութեան մը որուն մեծ պարգևը պիտի ըլլայ 10 ոսկի։

ԵՐԵԲԷՆ ՎԵՐՋԻՆԸ.— Երէկ առտու Պուլաքի մէջ կախաղան հանեցին Ահմէտ Ապտել Հատի ոճրագործը որ վերջինն էր կախուելու դատապարտուած երեք հոգիներու շարքին։

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ.— Թղթատարական վարչութեան հաստատած խնայողական մնտուկին յանձնուած դրամներու գումարը՝ մինչև Սեպտ. ամիսը 58,000 ոսկւոյ կը հասնի։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՀԵՌԱԳՐԵՐ

Պրուսսպուրգ 17 Սեպտ.— Զարը Տունքէրք մեկնեցաւ այսօր։

Վաշինկթըն 17 Սեպտ.— Պ. Մաք Քինլիի դագաղը հոս հասաւ. երդուեալ դատաւորներու մեծ ժողովը յայտարարութիւն մը հրատարակեց որով զՕլօկօց առաջին աստիճանի ոճիրով մը կ'ամբաստանէ։

Լոնտոն 17 Սեպտ.— Հինգշաբթի օր հոգեհանդիսական պաշտօններ պիտի կատարուին Ս. Պօղոսի Մայր եկեղեցւոյն և Ուէսթմինսթրի Աբբայարանին մէջ ի պատիւ Պ. Մաք Քինլիի յիշատակին։

Տանցիկ 17 Սեպտ.— Գերմանիոյ կայսրը 50,000 զինուորներու կողմէ տրուած զօրահանդէսի մը ներկայ գտնուեցաւ ընկերակցութեամբ Շիւն իշխանին։

Լոնտոն 17 Սեպտ.— Լորա Քիչնէր կը հեռագրէ թէ վերջացող շաբթուան մէջ Պօէրները հետեւեալ կորուստները ունեցած են. 48 մեռեալ, 7 վիրաւորեալ, 371 գերի ինկած և 134 անձնատուր եղողներ։

Կիրակի գիշեր Թշնամին Պէլֆասդի վրայ յարձակած է, բայց գիւրութեամբ ետ մղուած։

Կ. Պոլիս 17 Սեպտ.— Ն. Բ. Խտիվը, երէկ գիշեր Սուլթանին հետ ճաշեց։ Պօլսէն ճամբայ պիտի ելնէ ամսոյս 21 ին։

Վաշինկթըն 17 Սեպտ.— Պ. Մաք Քինլիի դագաղը, այս առտու բարակ անձրեւուտ օդով մը, Մէկոն Պլանշէն, Բափիթոքը փոխադրուեցաւ ընդհանուր սուգի մը արտայայտութեան միջն։

Պ. Հէյ պետական քարտուղարի պաշտօնէն հրաժարեցաւ. կ'ըսուի թէ Պ. Ռութ պիտի յաջորդէ իրեն։

Բոշուինկ 17 Սեպտ.— Արապի փաշա Եգիպտոս երթալու համար ճամբայ ելաւ։

(ՌԻՒԹԷՐ)

Տուսիֆէրտ 17 Սեպտ.— Պ. Լուպէ հոս հասաւ. թագաւորութեան շէնքին բացման ներկայ գտնուելով ճառ մը արտասանեց, որուն մէջ ըսաւ թէ Ռուսիոյ և Ֆրանսայի մէջ աւելի մտերմական մերձեցում մը՝ պիտի ծառայէ ապգային ապահովութեան և մեծութեան։

Այս հանդէսին ներկայ գտնուեցան բոլոր նախարարները և խորհրդարանի ու ժողովրդական նախագահները։

Օդը խիստ գէշ է։ (ՀԱՎՈՍ)

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Բարիզ 18 Սեպտ.— Պ. Լուպէ Տունքէրք մեկնեցաւ։

Լոնտոն. 18 Սեպտ.— Ծովային ռազմափորձերու հետևանքը հաստատուած է թէ Նօէլ ծովակալին նաւաբաժինը, թէև թուով շատ ստուար, բայց անտարակոյս կրնար ոչնչանալ Վիլսոն ծովակալին նաւաբաժնին կողմէ, թէպէտ թուով խիստ փոքր, սակայն զայն կազմող մարտանաւերը աւելի արագընթաց են և բոլորն ալ նորագոյն գրութեամբ կառուցուած։

Բէրլին. 18 Սեպտ.— Ճարտնական և Ամերիկեան զօրախումբերը արգիլեալ քաղաքը Զինացւոց յանձնեցին, որով օտար տէրութիւնները բոլորովին քաշուած կըլլան։

Տունֆերֆ, 18 Սեպտ.— Զարը և Զարուհին հոս հասան այս առտու և Պ. Լուպէի ընկերակցութեամբ ներկայ գտնուեցան նաւային հանդէսներուն։ Ծովուն թեթև ալիկոծութիւնը քիչ մը խանգարեց հանդէսին փայլը։ Ճաշի միջոցին Պ. Լուպէ Զարին կենացը բաժակ առաջարկելով, յայտարարեց թէ՝ Ռուսիոյ և Ֆրանսայի հետեւած քաղաքականութիւնը խիստ աւելի կամրապնդէ կոր երկու ազգերու մերձեցումը։

Զարը իր պատասխանին մէջ ըսաւ թէ մեծ է իր զոհունակութիւնը տեսնելով Ֆրանսայի այս փառաւոր նաւատորմիղը և բաժակը պարպեց Ֆրանսայի և անոր նաւատորմիղին բարգաւաճութեանը։

Նոցին վեհափառութիւնները Քոմիթիէյն մեկնեցան։

Լոնտոն 18 Սեպտ.— Լորա Քիչնէր կը հեռագրէ թէ «Կրընատիրը Կուարս»էն ջոկատ մը Պօէրներէ պաշարուելէ ետքը անձնատուր եղած է. Բիսլուս տեղակալը և զինուոր մը սպաննուած են, և երկու հոգի վիրաւորուած։ (ՌԻՒԹԷՐ)

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Թերթիս էջերուն զործակցութիւնը Տիար Լեոն Նիզամեան առանձնաձ ըլլալով, բաժանորդագրութեան և ծանուցմանց համար դիմել իր վաճառատեղին՝ Թէվֆիք փաշա փողոց։

ԱԶԴ

Տիար ԳԷՈՐԳ ԵԿԱԻՕՖ պատիւ ունի ծանուցանել թէ իր ապահովագրական գրասենեակը առժամապէս փոխադրած է «Մուշուալ Լայֆ» ընկերութեան Ընդհ. ներկայացուցչութեան յատուկ արարքմանին մէջ, Իսմայիլիյէ թաղը, Ֆրանսական Ընդհ. հիւպատոսարանի ճիշտ դէմը, Շավարպի փաշայի ապարանքը։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ԱՐԺԷԹԱԹԵՐԹ

Աղեքսանդրիա, 18 սեպտ.

Բրիվիլեժիէ	100	/—
Իւնիֆիէ	106	3/4
Տայիրա Սանիյէ	103	/—
Տօմանեալ	104	/—
Թրքական Քոնսոլիտէ, սեռի C	26	90
Բուսմէյի Երկաթուղի . . ֆր.	103	1/2
Քանալ սը Սիւէզ . . . »	3748	/—
Քանալ տը Սիւէզ օպլիկ. »	640	/—
Ն. սա. պանք օֆ էնիպթ Ա. Ո.	11	5/16
Աղէք. թրամվէյ (բրիվ.) ֆր.	50	1/2
Աղէքսանդրիոյ թրամվէյ (ագիոն տիվիտանտ) »	30	/—
Բրէսի ֆոնտիէ եգ. ագիոն »	512	/—
Բրէսի ֆոնտիէ 3 0/0 . . »	264	1/2
Զրի Ընկ. Դահիրէ . . . »	652	1/2
» Աղէքսանդրիա Ա. Ո.	35	7/8
» Թանթա . . »	22	/—
Պէհէրայի անանուն ընկ. »	49	/—
Իճիբշէն մարքէթս օպլ. 5 0/0 »	100	/—
» » ագիոն »	0.	14. 9
» սոլթ ընտ սոդա »	0.	16.—
Նանկս Լիչ Օթէլս . . . »	3.	7./8

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻՒ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 18 սեպտ.

Բամպակ. Նոյ. թալր.	10	1/4	—	3/32
» Ցունվ. »	10	3/32	—	1/8
» Մարտ »	10	7/32	—	1/4
Պիզրէ. Նոյ. Դեկ. Ցուն.				
Ղրուշ	65	—	—	5/40
» փետ. մարտ »	65	15/40	—	20/40
Բակլա. սեպ. հոկտ. »	93	1/4	—	15/40
» նոյ. դեկ. յլ. »	94	3/4	95	/—

Միշտ պարտականութիւնը գիւրին, պայքարը բնական, առաքինութիւնը անխուսափելի ցոյց տուած էր անոր, ինքը միայնակ ամփոփելով, զումարելով իրեն մէջ իրենց աստիճանին և իրենց վաղեմի անբիծ քաղքենութեան վերաբերող կնոջ հանգամանքները, ու այսպէս կեանքը բարի կ'ելլեւար Ժէրմէնին, անոր ճամբաները՝ գիւր, և աշխատութիւնը՝ փոքրոգի։

Աստմբսիօնի վարժարանը՝ իր գաստիարակութիւնը կատարելագործելու համար անցուցած քանի մը տարիները, իրեն պէս մնած, իրեն պէս մտածող ուրիշ աղջիկներու մէջեղ, վերջապէս ըրին զայն այն զմայլելի կինը որ պիտի ըլլար, ուսեալ և զգաստ, վստահ և բարեբաստիկ ուրախութեան այն ապագային առջև որ կարծես կը բացուէր իր տասնեւութ տարիներուն առջև։

Ռօն գետին վրայ պտոյտի մը ատեն խեղդուած իր հօրը և մօրը մահը յանկարծակի կը հափշտակէր զայն իր տղիտութեան երազին ծոցէն։ Ցանկարծ կը գտնէր զինքը որբ, առանց հարստութեան. տակաւին Բազմարուեստեան Վարժարանը ուսում առնող անդրանիկ եղբայր մը իրեն միակ նեցուկ ունենալով, և ինքն ալ ստիպուած պահպանելու իր երեք մատաղատի քոյրերը, Ռընէն, Մարթը և Սիւզէթը, երեք մանուկներ որոնց ամենէն մեծը տասներկու տարու չ'կար։

Այն ատեն, ծաղկատի աղջկան արի սրտին մէջ անձնուիրութեան ոստիկ պէտք մը զոյացաւ, որոշեց պզտիկներուն թողուլ իրենց մնացած քանի մը հազար ֆրանքը, մերժեց ընդունել երեց եղբօրը զոհաբերութիւնը, հաստատ միաքը դնելով որ թողու իր ասպարէզը, և իր հօրը իրեն թողուցած էակներուն կեանքը ապահովելու համար աշխատի։

—Մենք զմեզ հարուստ կը կարծէինք, բաւ եղբօրը. մեղի չի վայլեր ծնողքիս պարսաւել, քանի որ մինչև այս օրս զմեզ երջանիկ ըրին։ Ահաւասիկ ընտանիքի մեծ եղանք, պէտք է որ տղաքը մտածենք. մեր օգնութեանը պէտք ունին. յառաջ տար զուն ասպարէզդ, Մարսէլ, ջանա որ յաջողիս, և առանց քոյրերդ հոգալու, թող որ ես ալ քեզի պէս ընելու ջանամ։

Երիտասարդը ի զուր դէմ կեցաւ, և ուզեց բոլոր ընտանիքը հեռը տանիլ. ըսաւ որ դեռ վեց ամիս միայն դպրոց պիտի երթար, թէ մինչև այն ատեն ապրուստ ունէին, թէ վերջը հարկաւ գործը կը կարգադրէր, որպէս զի քոյրը տառապանք չիրէ։

Ժէրմէն անդրդուելի մնաց, մեկնեցաւ իր վանքը, ուր դրաւ իր երեք քոյրերը, և իրեն համար վարժուհիի պաշտօն մը փնտռեց քաջասրտութեամբ. այս կերպով պիտի կարենար անոնց թոշակը վճարել. իսկ փոքրիկ դրամպլուխը, տոկոսի դրուելով և մինչև անոնց չափահասութիւնը կրկնապատկուելով, գոնէ անոնց օժիտը հայթայթելու պիտի ծառայէր։

Պաշտօնանէն ընտրուած խնամակալը, որ իրենց մնացած միակ ազգականն էր, անձնասէր և այլանպակ մտքի տէր, տարիքը առած ամուրի մը, Ժէրմէնին խորհուրդին հաւնեցաւ՝ քանի որ իր ձեռնտուութեանը պէտք չունէին, ապէկ ա՛. նոյն իսկ իր շորջ եղող անձանց յայտարարեց որ իր ազգականուհին, թէպէտև տասնեւութ տարեկան միայն, տոկուն աղջիկ մըն էր։

Ժէրմէնին վանք երթալուն վրայ դեռ ամիս մը չէր անցած, և ահա մեծաւորուհին Գահիրէէն ստացաւ նամակ մը զոր փութաց ծաղկատի աղջկանը հաղորդել։

(Շարունակելի) թարգմ. Ց. ՍԵԹԵԱՆ

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԷԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎՖԻՔԻՃԷ — ԳԼԽԱՒՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԿԻՆ ՋԱԲԹԻԷՃԻ ՇԷՆՔ

ՄՈՒՉՈՒԱԼ ԼԱՅՖ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ-ԵՈՐՔԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ ՀՏԱՑՔ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՐ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱԶԱՐ ՖՐԱՆՔ

Ապահովագրական ամեն կարելի դրութիւնները կը գտնուին. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զուտակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱԼ ԼԱՅՖի սակագինը և ապահովագրութեան զանազան դրութիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրուիր. — Առատաձեռն պայմաններ։

Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ՔԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, ընդհ. ներկայացուցիչք։

Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակատար։ Գ. ԵԿԱՒՈՖ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 200,000,000 ՖՐԱՆՔ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Ց ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՌ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխատուութիւն արժէքաւոր թուղթերու վրայ։

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր տուանդներու վրայ։

Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր։

Կը դանձէ Եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր։

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուրհակներ կուտայ։

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵՒ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱՒԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ ԳԻԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) ղէպի Բիբէա, Իզմիր, Միտիլլի եւ Կ. Պոլիս։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միւնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին։

ԾԱՆՕԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւերը Բիբլա հանդիպելուն, Աթէնք այցելել։

ՍՈՒՐԻՈՅ ԳԻԾ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) ղէպի Բօռ-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մերսին և Իսկէնտէրուն։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միւնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին։

Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՀԻՏՏԷ, ՍՈՒԱՔԻՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանաց համար դիմել Ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բօռ-Սայիտի, Սուէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Քուքի ամեն մասնաճիւղերուն։

1—1902

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

—)(—

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԵՒ ԴՈՇԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մուսքի փողոց,

Ս. եւ Ս. Սիսնատի վաճառատան դէմը

Ապրանաց զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական Քօնօկրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յատուկ խորդներու արամադրութեան տակ կը գտնուի։

ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով

25 Յունվար 1898

Դրամագլուխ	*Անգլ. ոսկի*	1,500,000
Պահեստի դրամ	*,, ,,*	193,000

Կառավարիչ՝ Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ։ Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում։

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ։

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԼՈՒՅՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՕԼԻՍ 1882 թն

ՓՈԽԱԴՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թն

ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ — ՊԱԶԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարչատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոուփներ և ակրանտիսաներ։

Դուրսը ատուելիք լուսանկարներու համար դիմամտալի պայմաններ։

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿ

ԴԻՆԵՐՈՒ ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐԾԱԹ

ՄԷՏԱԼ

ԲԱՐԻԶ 1900

ԱՐԱՆՑ ԿԻՆԵՐՈՒ ԵՒ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԵԱՆ

ՁԱՓԱՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ս. ՇԹԷՖՆ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Կը տպուին ամէն լեզուէ հարսանեկան հրաւիրագրեր, Տիզեկագրեր, Նամակագլուխ, Դրքեր, Տոմսեր, Հաշուեցոյցեր, Մահագրեր Յայտարարութիւններ, եւայլն, եւայլն։

ԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ



ՅԱՆԶՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈՒԹՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ

50 % ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՈՎ

ԲԻՆԾԸԼ ԵՒ ՍԻՄՕՆՍ

Հաստատեալ յամին 1860

ՀԱՑԱԳՈՐԾՔ-ՀԱՅԹԱՅԹԻՂՔ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուռին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիսքիներ, եւ քէյքեր։

Այս փուռին մասնաւոր կառքեր կը շրջապտին Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հէլվան։

Թէվֆիգիյէ, Պուլաքի ճամբայ. ԳԱՀԻՐԷ

Թէլէֆոն թիւ 504.